

Բարեգործականի Ոսկեայ Տարիքի յանձնախումբը 2006-2007 տարեշրջանին ունեցաւ ճոխ ու բազմազան գործունէութիւն մը:

Տարեշրջանը սկսանք նոր յանձնախումբի կազմով մը՝ պրն. Յակոբ Մելքոնեան (ատենապետ), տիկիններ Սիրան Ճոպուլեան (գանձապահ), Չապէլ Միմպիլեան, Անուշ Պօղոսեան, Լիւսի Տէտեան եւ Անահիտ Արսլանեան՝ խորհրդակցանքեր: Բոլորն ալ ժրպջան եւ փորձառու անդամներ: Փոխադրութեան ծախսը թեթեւեղութեամբ փոխարինեցինք մեր երկրորդ օրոպիսը փոքր ինքնաշարժներով:

Նախագծուեցան ու իրագործուեցան նորանոր ծրագիրներ, ինչպէս իւրաքանչիւր ամսուան առաջին Չորեքշաբթի օրուան ճաշի դրութիւնը, որուն ընթացքին հրամցուեցան համեղ տնային հայկական ճաշեր: Իսկ ամսուան մնացեալ շրջաշաբթիները, ունեցանք ձմեռնային պաղ եղանակի օրերուն տաքուկ ապուրի սպասարկութիւն՝ հսկողութեամբ տիկ. Չապէլ Միմպիլեանի եւ գործակցութեամբ տիկիններ Սիրանին եւ Անուշին: Սոյն ճաշի սպա-



Տարեդարձի նշում

արկութիւնը մեծապէս զոհ ձգեց բոլոր տարեցները:

Ինչպէս անցեալին, այս տարի եւս շարունակեցինք նշել մեր անդամներուն տարեդարձները: Այցելութիւններ տրուեցան մեր հիւանդ անդամներուն, ինչպէս նաեւ իրենց տխուր առիթներուն բերուեցաւ յանձնախումբիս մասնակցութիւնը: Նշեցինք նաեւ տօնական օրերը, գեղարուեստական ճոխ յայտագիրներով: Միրայօժար իրենց մասնակցութիւնը բերին արուեստագետներ՝ Արթիւր Աբգարեան, Մայտա Լափանեան, եւ մտաւորական Քրիստին Տրդատեան-Գոյունճեան, ինչպէս նաեւ՝ մեր անդամ-անդամուհիները:

Առողջ մնալու մտահոգութեամբ, ամէն Չորեքշաբթի տիկ. Չապէլ Միմպիլեան ղեկավարեց մարզանքի պահերը եւ՝ մարզեց բոլորին տարիքին յարմար շարժումներով: Իսկ տիկ. Յասմիկ Խաչիկեան այս տարի եւս սիրայօժարօրէն ամէն Չորեքշաբթի խանդավառեց բոլորը հայկական շուրջպարերով:

Երկար տարիներէ ի վեր սովորութիւն դարձած պինկոյի խաղերը կազմակերպեց եւ հաւաքները խանդավառեց տիկ. Մատթոսի վա-



Կակաչներու փառատօն Օքքաուայի մէջ

սիլեան: Յանձնախումբս արելի եւս ուրախացնելու համար տարեցները պինկոյի հին խաղաքարտերը փոխարինեց նորերով:

Ունեցանք նաեւ ձմեռնային եւ գարնանային եղանակներու զօսապատյտներ՝ ինչպէս դէպի Քապան ա Միւրք, Լեռնային տեսարժան վայր Մոն Թրամպլան, Կակաչներու փառատօն՝ Օքքաուա եւ Գազինօ: Սոյն պտոյտները յաջողութեամբ կազմակերպեց տարիներէ ի վեր փորձառութիւն ունեցող եւ տարեցներուն հետ համբերատար պրն. Պերճ Քիփիլեանը, որ պիտի շարունակէ կազմակերպել մեր ամառնային բոլոր պտոյտները (տեսնել յատուկ յայտարարութիւնը սոյն պտոյտներուն) աջակցութեամբ Ոսկեայ Տարիքի յանձնախումբին:

Այս առիւ, Ոսկեայ Տարիքի յանձնախումբը իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ Հ.Բ.Ը.Միութեան Գործադիր Վարչութեան, Տէր Վազգէն քինյ. Պոյաճեանին, բոլոր նուիրատուներուն, տարեցներուն ապահով փոխադրութիւնը կատարող վարիչներուն, կամաւոր օժանդակողներուն, ՀԲԸՄի Ընկերային յանձնախումբի տիկիններուն, որոնք առիթը ընծայեցին որ մեր տարեցները ունենան բեղմնաւոր տարի մը եւս Բարեգործականի յարկէն ներս:

Մեր յաջորդ 2007-2008 տարեշրջանի հաւաքները պիտի վերսկսինք 12 Սեպտեմբերէն սկսեալ, ամէն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 10-էն կէսօրէ ետք ժամը 2:00: Մեր հաւաքները կը դառնան տարուէ տարի արելի հետաքրքրական եւ օգտաշատ: Կոչ կ'ուղղենք բոլոր հայ մայրիկներուն եւ հայրիկներուն, որպէսզի շարքը գէր մէկ անգամ իրենց առօրեայէն դուրս գալով ծանօթանան նոր բարեկամներու եւ ինչու չէ նաեւ զուարճանալու: Բարեգործականի վերանորոգում եւ արդիականացում կեդրոնը, տարեցներու յարմարութիւններով օժտուած, պատրաստ է ձեզ ընդունելու: Մի փախցնէք այս բացառիկ առիթը: Օրերը կը սահին ու կ'երթան անվերադարձ, կը սպասենք բոլորիդ, ձեր բարեկամներով:

ՔԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ԿԱԶՄԻՆԻՍՏՆԵՐԸ